Արձանագրություն N 3

«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/04» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Վանաձոր

12 մայիսի 2017թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանազյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյան /ԳԱ/, Ա. Փանոյան /ԳԱ/, Վ. Դանիելյան /ԲԱ/, Ն. Խաչատրյան /ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Դ. Թամարյան /ՄՀՄ/

«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/04» ծածկագրով գնանշման հարցման արդյունքների հաստատման մասին

1. «ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/04» ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներ «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի և «Շինպլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատել որպես «ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/04» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ «Վառմաշ» ՍՊԸ-ի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել անբավարար, քանի որ ըստ ՀՀ կառավարաությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկանքի, «Վառմաշ» ՍՊԸ-ի հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքը: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ մասի դրույթներով, «Վառմաշ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. «ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/04» ծածկագրով գնանշման հարցման ընտրված մասնակիցներ ճանաչել՝ «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ 6-րդ չափաբաժնի համար, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար և «Շինպլյուս» ՍՊԸ-ին՝ 5-րդ չափաբաժնի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հաշվետվության հաստատման նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը-12:00-ին, հասցեն՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, մարզպետարանի վարչական շենք, N 408 աշխատասենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Ջանազյան

Անդամներ՝ _____ Ա. Հարությունյան

_____ Ա. Փանոյան

_____ Վ. Դանիելյան

_____ Ն. Խաչատրյան

Քարտուղար _____ Դ. Թամարյան